«ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՈՒՂԵՑՈՒՅՑԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| **Առաջարկութ. հեղինակը,ամսաթիվ** | **Առաջարկության բովանդակությունը** | **Պարզաբանում, կատարված փոփոխություն** |
|---|---|---|
| **«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ Ա. Սաքունց**<br>**08.02.2017թ.** | 1. Ուղեցույցի 1-ին բաժնի 2-րդ կետով նշվում է, որ ընտրությունների ժամանակ ոստիկանության գործողությունների իրավական հիմքն է կազմում նաև մշակված Ուղեցույցը, ինչից ելնելով էլ գտնում ենք, որ այն պետք է լինի ամբողջական, ներառի ընտրությունների ամբողջ ընթացքը, առանձին բաժիններով ներկայացնի նախընտրական քարոզչության ընթացքում և ընտրությունների օրը ոստիկանության գործողությունների շրջանակը, այդ թվում՝ մանրամասն ներկայացնի այն ստորաբաժանումները, որոնք մասնակցելու են ընտրական գործընթացին, ընտրական գործընթացի ժամանակ ոստիկանության գործողությունների կամ անգործության բողոքարկման մեխանիզմները և կարգը, հանցագոր-ծությունների նախականխման, կանխման և բացահայտման ուղղությամբ ոստիկանության գործողությունների շրջանակը, հանցագործության մասին հաղորդումների ընդունման ընթացակարգը, դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը և ձեռնարկվող գործողությունների նկարագրությունը: Ընդ որում՝ դրանք պետք է ներկայացվեն ինչպես նախընտրական քարոզչության ժամանակահատվածի, այնպես էլ՝ բուն ընտրության օրվան վերաբերող մասով:<br>Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ Ուղեցույցում անհրաժեշտ է լրացնել.<br>1. **Նախընտրական քարոզչության ընթացքում ոստիկանության գործողություններին վերաբերող բաժին**<br>Ուղեցույցի փոփոխված տարբերակում լրացվել է 31-րդ կետ, որով նախատեսվել է քարոզչության ընթացքում ոստիկանության ծառայողների գործողությունները, կարծում ենք, որ նախընտրական քարոզչու- | Ուղեցույցի շրջանակների ընդլայնման դեպքում այն կարող է դառնալ ուսումնամեթոդական ձեռնարկ, որը նախատեսված է ոստիկանության ծառայողների առավել խորը վերապատրաստման համար: Ուղեցույցի նպատակը ավելի սահմանափակ է ու կոնկրետ, այն հակիրճ նկարագրում է տարածքում ծառայություն կատարող ոստիկանության ծառայողների գործողությունները և նպատակ չունի անդրադառնալ ոստիկանության գործունեությանն ընդհանրապես: Միաժամանակ, նկատի ունենալով որ ներկայացված առաջարկության համար հիմք է հանդիսացել ուղեցույց 2-րդ կետը (ոստիկանության գործողությունների իրավական հիմքերի առնչությամբ), նշված կետից հանվել է ուղեցույցի՝ որպես իրավական հիմքի վերաբերյալ հիշատա-կումը:<br><br>Առաջարկությունների 1-4 և 6-րդ կետերով ներկայացվող գործողությունները վերաբերվում են ոստիկանության վարչաղատավարական (վարչական գործունեության, այդ թվում՝ ուժի կիրառման) օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական ֆունկցիաներին, որոնց ամրագրումը սույն ուղեցույցում |

| | | |
|---|---|---|
| | թյան ընթացքում ոստիկանության միջամտության անհրաժեշտությունը կարող է առաջանալ ինչպես վարչական իրավախախտումների, այնպես էլ՝ հանցագործությունների նախականխման, կանխման և բացահայտման ոլորտներում: Կարծում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել իրավական ակտերը և նկարագրել ոստիկանության ծառայողների պարտականությունները, տարբերակել ստորաբաժանումները, հստակ սահմանել և ցույց տալ, թե որ ստորաբաժանման ծառայողը, որ գործառույթի համար է պատասխանատու, ինչպես և ինչ ժամկետներում պետք է քննարկվեն հանցագործության վերաբերյալ հաղորդումները<br>Նախընտրական քարոզչության ընթացքում առաջադրված կուսակցությունների (թեկնածուների) կողմից կազմակերպվում են հավաքներ, ինչպիսի գործողության անվտանգ և բնականոն ընթացքի երաշխիքը պետք է հանդիսանա ոստիկանության համակարգված և օպերատիվ աշխատանքը, ինչից ելնելով գտնում ենք, որ Ուղեցույցում պետք է նկարագրվեն ոստիկանության պարտականությունները և գործողություններն այս ոլորտում:<br><br>**2. Ճանապարհային ոստիկանության ծառայության պարտականությունների և գործողությունների վերաբերյալ բաժին.**<br>Գտնում ենք, որ թե՛ նախընտրական քարոզչության, և թե՛ ընտրությունների օրն իր մասնակցությունը պետք է ունենա և ունի նաև ճանապարհային ոստիկանության ծառայությունը: Ուստի Ուղեցույցում անհրաժեշտ է նկարագրել նաև վերջինիս պարտականությունները, գործողությունների շրջանակները, խնդիրները:<br><br>**3. Ոստիկանության գործողությունների (անգործության) բողոքարկման կարգին վերաբերող բաժին.**<br>Ուղեցույցի փոփոխված տարբերակում նախատեսվել է ոստիկանության գործողությունների դեմ ներկայացվող բողոքների կարգին վերաբերող տեղեկություններ. Գտնում ենք, որ Ուղեցույցի առավել արդյունավետու- | նպատակահարմար չենք համարում:<br>Միաժամանակ, բացառելու համար տարածական մեկնաբանությունները, ուղեցույցի 1-ին կետը խմբագրվել է հետևյալ կերպ. ««Ընտրությունների ժամանակ ոստիկանության գործողությունների ուղեցույցի» (այսուհետ՝ ուղեցույց) նպատակն է ընտրական տեղամասեր գործուղվող և հասարա-կական կարգը պահպանող ոստիկանության ծա-ռայողների առաջնահերթ (անհետաձգելի) գործողություններին, ինչպես նաև ընտրական հանձնա-ժողովների հետ փոխհամագործակցությանը վերաբերվող դրույթների ամրագրումը»: |

| | | |
|---|---|---|
| | թյունն ապահովվելու և ամբողջական դարձնելու նպատակով անհրաժեշտ է դրանում նախատեսել նաև ոստիկանությանը վերապահված պարտականությունների չկատարման հետևանքները, ոստիկանության ծառայողների գործողությունների կամ անգործության բողոքարկման կարգը (գրավոր ընթացակարգը), այդ թվում բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը և ժամկետները:<br>Անհրաժեշտ է սահմանել նաև բողոքները քննարկող իրավասու անձանց շրջանակը, բողոքների քննության առանձնահատկությունները, ժամկետ-ները և որոշման բովանդակությանը վերաբերող հարցեր՝ հաշվի առնելով ընտրական գործընթացի առանձնահատկությունները, սեղմ ժամկետ-ները և այլն:<br><br>**4. Հանցագործությունների կանխման և բացահայտման գործընթացի կարգավորման առանձնահատկություններին վերաբերող բաժին.**<br>Գտնում ենք, որ անհրաժեշտ է առանձնացնել բաժին, որով կներկայացվի ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ընտրական գործընթացին վերաբերող հոդվածները, մանրամասն նկարագրել, թե դրանք ինչպես կարող են դրսևորվել, յուրաքանչյուր դեպքով ոստիկանության որ ստորաբաժանումը ինչպես պետք է գործի, ինչ կարգով պետք է ընդունվեն հաղորդումները, դրանք ինչպես և ինչ ժամկետներում պետք է ընթացք ստանան, որ ստորաբաժանման կամ խմբի վրա ինչ պարտականություն է դրված, քրեական գործ հարուցելու հարցի վերաբերյալ ով, ինչ ժամկետներում և ինչ իրավասություն ունի:<br>Գտնում ենք, որ առավել արդյունավետ կլինի, եթե առանաձին-առանձին վկայակոչվի ՀՀ քրեական օրենսգրքի 149-154.8 հոդվածները, ներկայաց-վի դրանցից յուրաքանչյուրի դեպքում ոստիկանության ստորաբա-ժանումների մասնակցության աստիճանը, գործողությունները և պարտա-կանությունները, քրեական գործ հարուցելու վերաբերյալ որոշում կայաց-նելու իրավասությունը, ժամկետները: Ուղեցույցի 3-րդ բաժնի 6-րդ կետում թվարկված խմբերից յուրաքանչյուրի | |

| | | |
|---|---|---|
| | պարտականությունները և գործա-ռույթները:<br>Հաշվի առնելով, որ ընտրությունների ընթացքում, հաղորդումների զգալի թիվը վերաբերում է կաշառք տալուն և վերցնելուն, առաջարկում ենք, որ այս ուղղությամբ առավել մանրամասն նկարագրվի ոստիկա-նության պարտականությունները և գործողությունները: Առավելապես շեշտադրվեն ոստիկանության Օպերատիվ խմբի պարտականություն-ները:<br><br>**5. Ուղեցույցի 20-րդ կետը վերաբերում է տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշմանը**՝ դիտորդների և ԶԼՄ-ների առավելագույն թիվ սահմանելու վերաբերյալ որոշման կատարմանը: Ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 7-րդ կետի՝ տեղամասային հանձնաժողովը կարող է իր որոշմամբ սահմանել քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելա-գույն թիվը, այսինքն՝ Հանձնաժողովը լիազորված չէ որոշելու, թե որ կազմակերպության դիտորդը պետք է լքի տեղամասը: Կարծում ենք, որ այս դրույթը գործնականում խնդիրներ է ստեղծելու և կարող է կամայա-կանության առիթ դառնալ: Նույն 65-րդ հոդվածի 7-րդ կետի շարունա-կության մեջ նշվում է, որ Ընտրական հանձնաժողովի կողմից սույն մասի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության օժանդակությամբ: Ուղեցույցի 20-րդ կետը վերաբերում է այս նորմի կատարմանը, որի համաձայն՝ ոստիկանության ծառայողը պետք է մոտենա հեռացման ենթակա դիտորդին կամ ԶԼՄ ներկայա-ցուցչին, ծանոթացնի հանձնաժողովի որոշմանը և պահանջի լքել ընտրա-տեղամասը: Սակայն անհասկանալի է, թե ինչպես է որոշելու, որ դիտոր-դին մոտենալ՝ ով է հեռացման ենթակա դիտորդը:<br>***<u>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք</u>*** դիմել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 7-րդ կետի վերաբերյալ պարզաբանում ստանալու խնդրանքով, ինչից | Ուղեցույցի 20-րդ կետը շարադրված է ՀՀ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներին համապատասխան: Այս իմաստով՝ ԿԸՀ-ի պարզաբանումը որևէ կերպ չի փոխելու նշված դրույթի խմբագրությունը: Ինչ վերաբեր-վում է իրավադրույթի միատեսակ ընկալման և կիրառման խնդրին, ոստիկանությունը կիսում է ներկայացված մտահոգությունը և քննարկվող նորմի պահանջը փորձելու է իրացնել բացառա-պես համոզման մեթոդով՝ կոնկրետ իրավիճակ-ներում գործելով հանձնաժողովների նախագահ-ների համաձայնեցված կարգով:<br>Ամեն դեպքում, ոստիկանությունը այս առթիվ կխորհրդակցի ԿԸՀ-ի հետ՝ միատեսակ մոտե-ցումներ ապահովելու համար:<br>Գտնում ենք, որ անկախ դրանից, ԿԸՀ պաշտո-նական պարզաբանման բացակայությունը ար-գելք չէ ուղեցույցը հաստատելու համար: |

| | | |
|---|---|---|
| | հետո միայն նկարագրել ոստիկանության ծառայողների գործողությունները:<br>**6. Գտնում ենք, որ Ուղեցույցում առանձին կետով պետք է նախատեսվի** հարկադրանք կիրառելու կարգը, այդ թվում՝ կիրառման ենթակա միջոցները, ֆիզիկական ուժ գործադրելու հիմքերը, դրանց վերաբերյալ օրենսդրական կարգավորումները: | |
| **«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ Դ. Իոաննիսյան**<br>**08.02.2017թ.** | 1. 14-րդ կետում հստակ ամրագրել, որ հանցագործություն կատարվելու կամ կատարված լինելու մասին առկա բավարար տվյալներ են նաև հանցակազմ պարունակող արարքի մասին բանավոր ահազանգը: | Առաջարկությունը սկզբունքորեն ընդունելի է, սակայն կետը խմբագրելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ առկա շարադրանքի պարագայում բանավոր հաղորդումները ևս կարող են համարվել բավարար տվյալներ: |
| | 2. 16-րդ կետում ամրագրել, որ ոստիկանները կարող են օգտագործել բարձրախոս կուտակված մեքենաների վարորդներին կանչելու համար, ինչպես նաև կանչել «ճանապարհային ոստիկանություն» ծառայության պարեկային խումբ կամ ոստիկանության տվյալների բազայով պարզել մեքենայի սեփականատիրոջ հեռախոսահամարը և զանգելով նրան ներկայացնել պահանջը: | Առաջարկությունը ընդունվել է, կետը խմբագրվել է: |
| | 3. 18-րդ կետում առաջարկում ենք մանրամասնել զենքով տեղամաս մուտք գործած ոստիկանի գործողությունները: Մասնավորապես, ամրագրել, որ անգամ այդ դեպքում ոստիկանը պարտավոր է նվազագույնս ազդել տեղամասում օրինական պրոցեսների ընթացքի վրա: | Առաջարկությունն ընդունվել է, կետը խմբագրվել է: |
| | 4. 20-րդ կետում չսահմանափակվել միայն քվեարկությամբ տեղամասից հեռացված անձանց նկատմամբ հարկադրանքի կիրառման դեպքերով, այլ նաև նկարագրել այն դեպքերը, երբ կարիք կա տեղամասում գտնվելու իրավունք չունեցող անձին հարկադրաբար հեռացնել: Տեղամասում գտնվելու իրավունք չունեցող անձանց շրջանակը առավել լայն է, քան միայն քվեարկությամբ հեռացվածները: | Առաջարկությունն ընդունելի չէ, քանի որ «տեղամասում գտնվելու իրավունք չունեցող» անձանց վերաբերյալ Ընտրական օրենսգրքում կարգավորումներ չկան: Օրենսգրքի 46-րդ հոդվածի 8-րդ մասում խոսքը գնում է «քվեարկության սենյակում գտնվելու իրավունք չունեցող» անձանց մասին, իսկ 65-րդ հոդվածի 7-րդ մասը ոստիկանությանը պարտավորեցնում |

| | | |
|---|---|---|
| | 5. Ամրագրել, որ ցանկացած անձի նկատմամբ հարկադրանք կիրառելու դեպքում ոստիկանության ծառայողը նրան իրազեկում է, որ քաղաքացին կարող է ոստիկանության գործողությունները բողոքարկել դատական կարգով:<br><br>6. 29-րդ կետում առաջարկում ենք սահմանել, որ ուղեկցող վերակարգը ուղեկցելուց առաջ հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցնում է ուղեկցման երթուղին: Ընտրական փաստաթղթերով մեքենայի կողմից երթուղուց շեղվելու յուրաքանչյուր դեպք գրանցվում է «ծառայողական գրքույում»: Անգամ երթուղուց շեղվելու դեպքում ոստիկանները շարունակում են ուղեկցել ընտրական փաստաթղթերով մեքենան առանց այն տեսադաշտից կորցնելու: Ընտրական փաստաթղթերով ուղեկցվող մեքենան տեսադաշտից կորցնելու դեպքում ոստիկանության ծառայողները այդ մասին ամիջապես բոլոր հնարավոր միջոցներով կապվում և հայտնում են օպերատիվ շտաբ, որն իր հերթին բոլոր հնարավոր միջոցներով սկսում է որոնել ընտրական փաստաթղթերով մեքենան (ներգրավելով «ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը): | է հանձնաժողովին օժանդակել հենց քվեարկության սենյակից հեռացման ենթակա անձանց հարցում:<br>Ամեն դեպքում, եթե ընտրական տեղամասում գտնվող անձինք կդրսևորեն հակահասարակական վարքագիծ, ապա ոստիկանության ծառայողները կմիջամտեն իրենց իրավասությունների սահմաններում:<br><br>Առաջարկությունն ընդունվել է, նախատեսվել է համապատասխան դրույթ:<br><br>Առաջարկությունն ընդունվել, խմբագրվել է ոչ թե 29-րդ, այլ 28-րդ կետը: |

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ